

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ՝ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի հայցորդ  
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի դասախոս  
Երևանի «Գլոբալ Բրիջ» դպրոցի ուսուցիչ*

**Բանալի բառեր՝** Գրականություն, դասավանդում, դպրոց, չափորոշիչ, կրթություն, մեթոդաբանություն, դասագիրք:

Վերջին հնգամյակում (2020-2025 թթ.) Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգում ընթանում են բավական մեծածավալ փոփոխություններ, որոնք ուղղված են ուսուցման բովանդակության արդիականացմանը և սովորողի գիտելիքների, կարողությունների, արժեհամակարգի ձևավորմանը: Այլ կերպ՝ սա կոչվում է նաև *կարողունակահեն կրթություն*: Այդ փոփոխությունների շոշափելի արդյունքների մասին դեռևս հնարավոր չէ ամբողջական և համակարգված դիտարկումներ անել, քանի որ ընթացքի մեջ է հանրակրթական պետական նոր չափորոշիչ ներդրումը:

Հանրակրթական պետական չափորոշչում ուսուցման նպատակները վերաձևակերպվել են 21-րդ դարի պահանջներին համահունչ: Սահմանվել են հստակ վերջնարդյունքներ, որոնց միջոցով ավելի չափելի են առարկայական և վերառարկայական նպատակներն ու խնդիրները: [Տե՛ս սույն փաստաթուղթը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788> ]<sup>1</sup>

Հայոց լեզվի և գրականության պետական առարկայական չափորոշչում նշված է. «Գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեհամակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում»: [<https://escs.am/files/files/2021-05-/1d10dc19d7adbb902d7a2ee54481cbc8.pdf>]<sup>2</sup>

Գրականությունը՝ որպես գեղարվեստական և արժեքային գիտելիքի ամբողջություն, պահանջում է ոչ միայն տեղեկույթի պարզունակ փոխանցում, այլև դրա ընկալման, վերապրման և մեկնաբանության կարողությունների զարգացում: Ըստ հանրակրթական պետական չափորոշիչի ձևակերպման՝ կրթական նոր չափորոշիչները փոխում են ուսուցման հայեցակարգը՝ գիտելիքահեն մոդելից անցում կատարելով կարողունակահեն մոդելի: Սա նշանակում է, որ սովորողը պետք է ոչ միայն յուրացնի գիտելիքը, այլև կարողանա այն կիրառել իրական կյանքում՝ ստեղծագործական, վերլուծական և հաղորդակցական որոշակի հմտությունների համադրմամբ: Նոր դասագրքերի ստեղծումը միտված է մեթոդաբանական նոր լուծումների ներդրմանը, որոնք առավելագույնս նպատակաուղղված են սովորողի ներգրավմանը, տեքստի ուսումնասիրությանը, ընկալմանը, նոր տեքստի ստեղծմանը, քննադատական մտածողության ձևավորմանը և ստեղծագործական ներուժի բացահայտմանը:

Ուսումնասիրելու նպատակով առանձնացրել ենք «Անտարես» հրատարակչության «Գրականություն 7», «Գրականություն 8», «Գրականություն 9» դասագրքերը: Սույն դասագրքերը կազմված են ըստ գրականություն առարկայի պետական առարկայական ծրագրի: Հեղինակային խումբը (Արքմենիկ Նիկողոսյան, Արսեն Վարդանյան) մշակել և դասագրքում ներդրել է գրականության դասավանդման հայեցակարգ, որի առանցքային նպատակներից են՝

- զարգացնել սովորողի ընթերցողական և վերաշարադրման (վերապատմելու) կարողությունները,
- բնութագրել գրական երկը, կերպարը, երևույթը,
- խրախուսել անձնական վերաբերմունքի ձևավորումը գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ,
- խորացնել ազգային և համամարդկային մշակութային արժեքների ընկալումը
- ձևավորել ինքնարտահայտման կարողություն՝ բանավոր և գրավոր ձևերով
- կարողանալ ճանաչել, տարբերակել և մեկնաբանել գրականագիտական հասկացությունները,
- բացահայտել միջառարկայական և վերառարկայական կապերը,
- արժևորել գրողի կենսագրությունը, գրական երկի գաղափարը՝ այն կապելով իր անձնական կյանքին ու փորձառությանը:
- ճանաչել և մեկնաբանել գրական տեքստի լեզվաոճական առանձնահատկությունները,
- կարողանալ համեմատել և հակադրել, ինչպես նաև համապատասխան եզրակացություններ անել սովորած նյութի վերաբերյալ,
- թեմային համապատասխան ինքնուրույն հարցադրումներ անել, տեքստի համապատասխան հատվածները գտնել, տեղին և հիմնավորված մեջբերումներ անել,
- ունենալ դիրքորոշում և կարողանալ այն պաշտպանել համապատասխան փաստարկներով:

Վերոնշյալ նպատակների իրագործումը հնարավոր չէ միայն տեղեկույթի փոխանցման միջոցով: Հետևաբար՝ նոր չափորոշիչները պահանջում են դասավանդման մեթոդների վերանայում՝ ուսուցման միջավայրի ակտիվացման և փոխգործուն բնույթի ապահովման նպատակով: Կարևորվում են սովորողի դիրքորոշման և վերաբերմունքի արտահայտումը խթանող առաջադրանքները: Գրականագետներ Ռընե Ուելլեքը և Օսթին Ուորրենը «Գրականության տեսություն» գրքում գրում են. «Գրականության բնույթը, դերը և արժեքավորումը պետք է գոյատևեն սերտ համագործակցության մեջ»<sup>1</sup>: Սույն սկզբունքը դասագրքում պահպանված է գրեթե բոլոր թեմաներին հատկացված բաժիններում:

<sup>1</sup> Ռ. Ուելլեք, Օ. Ուորրեն «Գրականության տեսություն», Ե. 2008, էջ՝ 354

## **Ընդհանուր առմամբ, դասագրքերում առկա են հետևյալ մոտեցումները՝**

**ա) Տեղեկատվական տեքստերի լեզվի շարադրանքի պարզեցում:** Տեղեկույթ պարունակող տեքստերը շարադրված են գիտահանրամատչելի ենթաոճով՝ ըստ միջին դպրոցում սովորող երեխայի տարիքային առանձնահատկությունների:

**բ) Տեսալողական նյութերի առկայություն:** Առկա են էլեկտրոնային ծածկագրեր, լրացուցիչ նյութեր, արվեստի գործերի վերատպություններ, որոնց շնորհիվ գրական երկի ընկալումն ավելի համակողմանի է դառնում: Հայ և համաշխարհային մշակույթի ընտիր նմուշների պատկերները նպաստում են թեմայի ավելի համակողմանի ընկալմանը<sup>2</sup>:

**գ) Հարցերի և առաջադրանքների կառուցվածքային փոփոխություն:** Ավանդական՝ հիշողության վրա հիմնված հարցերը փոխարինվում են բաց, վերլուծական, արժեքային դատողությունների հիման վրա կառուցված առաջադրանքներով: Օրինակ՝ «Որտե՞ղ և ինչպիսի՞ միջավայրում է անցել Շիրվանզադեի կյանքը: Ինչպե՞ս է դա ազդել նրա ստեղծագործության վրա»<sup>3</sup> :

Ի՞նչ ազդեցություն է ունեցել կրթությունը գրողի ձևավորման գործում:

Գրողների կենսագրությունը սուկ փաստերի և թվերի ուսումնասիրություն չէ: Այն ներառում է տեղեկույթի ընկալում, իմաստավորում, գրողի կերպարի, ժամանակաշրջանի, ազդեցությունների, առնչությունների բնութագրում և այլն: Գրականագետ Թ. Ջուհարյանը. «Հայ գրականության մեթոդիկա» ձեռնարկում գրում է. «Գրողների կենսագրությունների ուսումնասիրումն ընդլայնում ու խորացնում է ակնարկային թեմաների անցման ընթացքում հաղորդված պատմագրական տեղեկությունները»<sup>4</sup> :

**դ) Տեղեկատվական տեքստերի և բնագրերի շուրջ աշխատանք:** Կյանքի և ստեղծագործության, ինչպես նաև՝ չափածո ստեղծագործությունների դեպքում հարցերը և առաջադրանքները տրված են բնագրից հետո: Արձակ ստեղծագործությունների դեպքում դրանք լուսանցքում են՝ տեքստի ընթերցանությանը զուգահեռ աշխատելու համար:

Առկա են ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի առաջադրանքի նմուշներ, որոնք ուսուցչի հայեցողությամբ կարող են փոփոխվել, տեղայնացվել՝ հարմարեցվելով աշակերտների պահանջներին և կարիքներին:

Արևի նշանով հատուկ հարցերն ունեն միջառարկայական բնույթ, կարող են դառնալ նախագծային աշխատանքի թեմաներ, նախատեսված են առանձնահատուկ հետաքրքրություններ, նաև օժտվածություն ունեցող սովորողների համար: Դրանք պարտադիր չեն բոլորի համար:

Գերակշռում են բաց հարցերը, ստեղծագործական առաջադրանքները: Ըստ գրականագետ Աելիտա Դոլուխանյանի՝ գրականության ուսուցման հիմունքներից են՝ թեմայի, գաղափարի, ձևի և բովանդակության, նրանց փոխադարձ կապի խնդիր-

<sup>2</sup> Տե՛ս Ա. Նիկողոսյան, Ա. Վարդանյան, Գրականություն 9, Ե., 2025, էջ՝ 14, 33 և այլն:

<sup>3</sup> Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա., Գրականություն 8, Ե. 2024, էջ՝ 48

<sup>4</sup> Թ. Ջուհարյան, Հայ գրականության մեթոդիկա, Ե. 1972, էջ՝ 325

ները<sup>5</sup>: Սրանց տրամաբանական շարունակությունը գրական երկի իմաստավորումն է սեփական և հանրային կենսափորձով:

**ե) Ուսուցման փոխգործուն մեթոդների առաջարկներ:** Դասագրքերում առկա են զանազան մոտեցումների, մեթոդների և հնարների առաջարկներ: Դրանցից են՝

- դերային խաղերը,
- խմբային քննարկումները և բանավեճերը,
- վերլուծական շարադրությունները և էսսեները,
- ստեղծագործական տարաբնույթ աշխատանքները<sup>6</sup>,
- հետազոտական բաղադրիչ ունեցող առաջադրանքները,
- միջառարկայական վերլուծության առաջադրանքները
- տեքստի համակողմանի վերլուծության առաջադրանքները<sup>7</sup>:

**զ) Ուսուցիչ-սովորող փոխհարաբերության վերաիմաստավորում:** Դասավանդման մոդելը փոխվում է՝ ուսուցիչը հանդես է գալիս որպես միջավայր ձևավորող և սովորողի ուղեկից, այլ ոչ միայն գիտելիքի փոխանցող: Սա պահանջում է նաև ուսուցչի մեթոդաբանական վերապատրաստում և վերազինում՝ նոր ուսումնամեթոդական գործիքակազմով: Ուսուցման ժամանակակից մեթոդների վերաբերյալ գրականագետ Արմենուհի Արզումանյանը գրում է. «Ժամանակակից աշակերտակենտրոն ուսուցման գործընթացը պահանջում է ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնց կիրառման արդյունքում աշակերտը ուսուցանվող նյութը չի ստանում որպես պատրաստի ամբողջություն, այլ՝ այդ թեմայի կամ խնդրի ամբողջացման գործում ունենում է իր անմիջական ներդրումը՝ որպես հետազոտող, պրպտող և համադրող անձ»<sup>8</sup>: Ուսուցիչը պետք է խելամտորեն և տրամաբանական հաջորդականությամբ կազմակերպի առաջադրանքների քննարկումը, ուղղորդող հարցերի միջոցով մղի սովորողին բացահայտելու գրական երկի ասելիքը, վերլուծելու բովանդակությունը և այլն:

Այսպիսով՝ գրականության նոր դասագրքերում ներդրված մեթոդաբանական փոփոխությունները կարևոր քայլ են դեպի ուսուցման բովանդակության արդիականացում և կրթական նոր չափորոշիչների արդյունավետ իրականացում: Դասավանդման մոդելի այս փոփոխությունը շեշտադրում է սովորողի ակտիվ դերակատարությունը, ընթերցանության արժեքային, վերլուծական բնույթը և գրականության դերը որպես ինքնաճանաչման և արժեքային համակարգի ձևավորման միջոց: Սակայն մեթոդաբանական բարեփոխումները կայուն արդյունք կտան միայն այն դեպքում, երբ կրթական ամբողջ համակարգը պատրաստ լինի ընդունել և զարգացնել նոր մոտեցումները՝ ապահովելով անհրաժեշտ մեթոդական, նյութատեխնիկական և մասնագիտական աջակցությունը ուսուցիչներին:

<sup>5</sup> Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Ե. 2006, էջ՝ 24

<sup>6</sup> Տե՛ս Ա. Նիկողոսյան, Ա. Վարդանյան, Գրականություն 7, Ե. 2023, էջ՝ 105

<sup>7</sup> Ա. Նիկողոսյան, Ա. Վարդանյան, Գրականություն 8, Ե. 2024, էջ՝ 130

<sup>8</sup> Ա. Արզումանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդներ և ձևեր, Ե. 2020, էջ՝ 5

Այս համատեքստում գրականության դասավանդումը դառնում է ոչ միայն ուսումնական գործընթաց, այլ նաև մշակութային հաղորդակցության, արժեհամակարգային կրթության և քաղաքացիական ինքնագիտակցության ձևավորման առանցքային դաշտ:

### **Ամփոփագիր**

2020–2025 թթ . Հայաստանում կրթական բարեփոխումների արդյունքում ներդրվել են նոր չափորոշիչներ, որոնք կարևորում են անհատի զարգացումն ու 21-րդ դարի հմտությունների ձևավորումը: Գրականության ուսուցումը նոր շեշտադրում ստացավ՝ նպատակաուղղված արժեքների ձևավորմանը, քննադատական մտածողությանն ու ստեղծագործականությանը: Նոր դասագրքերը կիրառում են նորարարական մեթոդներ՝ խթանելու աշակերտների ներգրավվածությունը, վերլուծական հմտությունները և զգայական ու մտավոր զարգացումը:

#### **Методика преподавания литературы в новых учебниках в контексте обновлённых образовательных стандартов**

**Ключевые слова:** *литература, преподавание, школа, стандарт, образование, методология, учебник*

В 2020–2025 годах в системе образования Армении были проведены реформы, которые ввели новые стандарты, акцентирующие внимание на личностном развитии и навыках XXI века. Преподавание литературы получило новое значение, направленное на формирование ценностей, критического мышления и творческого потенциала. Новые учебники используют инновационные методы для повышения вовлечённости учащихся, развития навыков интерпретации, а также эмоционального и интеллектуального роста.

#### **Methodology of Teaching Literature in New Textbooks within the Framework of Updated Educational Standards**

**Key words:** *literature, teaching, school, standard, education, methodology, textbook*

Between 2020–2025, Armenia’s education reforms introduced new standards emphasizing personal development and 21st-century skills. Literature teaching gained renewed focus, aiming to foster values, critical thinking, and creativity. New textbooks now use innovative methods to enhance student engagement, interpretation skills, and emotional and intellectual growth.

### **Գրականություն**

1. Արզումանյան Ա. 2020, Հայ գրականության դասավանդման մեթոդներ, ձևեր, Երևան
2. Դոլուխանյան Ա. 2006, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան
3. Դոլուխանյան Ա. 2013, Գեղարվեստական գրականության վերլուծության մի քանի սկզբունքներ, Երևան
4. Կիրակոսյան Վ. 2006, Գրականությունը 7-9-րդ դասարաններում, Երևան
5. Նիկողոսյան Ա. և Վարդանյան Ա. 2023, Գրականություն 7, Երևան
6. Նիկողոսյան Ա. և Վարդանյան Ա. 2024, Գրականություն 8, Երևան
7. Նիկողոսյան Ա. և Վարդանյան Ա. 2025, Գրականություն 9, Երևան

8. Զուհարյան Թ. 1972, Հայ գրականության մեթոդիկա, Երևան
9. Ուելլեք Ռ. և Ուորրեն Օ. 2008, Գրականության տեսություն, Երևան

### **Համացանցային աղբյուրներ**

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ և «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ, 10.05.2025 թ.

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=176068>

Հանրակրթության պետական չափորոշիչի ձեւավորման եվ հաստատման կ ա ռ գ, 10.05.2025

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>